# ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑ
# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ
# ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաստատված 01.01.2023

«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոց*

***Ակադեմիական ազնվությունը որոշակի արժեքների և կարողությունների ամբողջությունն է, որը նպաստում է յուրաքանչյուր սովորողի դառնալու ավելի ազնիվ:***

«Ակադեմիական ազնվություն» նշանակում է կատարել բոլոր ակադեմիական աշխատանքները՝ բացառելով գրագողությունը, կեղծիքը, կրկնօրինակումը, խարդախությունը:

***Ակադեմիական ազնվության քաղաքականություն*** *փաստաթղթի կառուցվածքը*

- ***Նպատակ***
- ***Անազնիվ վարքագիծ***
- ***Խախտումներ և պատասխանատվություն***
- ***Պատասխանատուներ և դերեր***
- ***Կազմակերպական աշխատանք***
- ***Աղբյուրներ***

1. ***Ակադեմիական ազնվության քաղաքականություն փաստաթղթի նպատակն է*** ապահովել՝

- Ազնիվ, արդար և անաչառ միջավայր,
- վստահության ու հուսալիության կրթական միջավայր
- այնպիսի ուսումնական միջավայր, որը դրդում է սաներին ստեղծել անհատական աշխատանքներ՝ հարգելով մյուսների աշխատանքը,
- ազնիվ վարքագիծ՝ խթանելով սովորողի նկարագրի որակների զարգացումը:

2. ***Ակադեմիական անազնիվ վարքագիծ*** ասելով մենք հասկանում ենք՝

- Գրագողություն
- Գաղտնի համաձայնություն
- Աշխատանքի կրկնօրինակում
- Հուշարարություն

***3. Խախտումներ և պատասխանատվություն***

Ակադեմիական ազնվության խախտման դեպքում իրականացվում են հետևյալ քայլերը՝

- Ուսուցիչը վարում է զրույց սովորողի (ըստ անհրաժեշտության՝ նաև ծնողի) հետ, որի ընթացքում անդրադարձ է կատարվում ակադեմիական ազնվության փաստաթղթում առկա պատասխանատվություններին,

- հնարավորություն է տրվում կրկին կատարել աշխատանքը, որի դեպքում առաջին աշխատանքը չի գնահատվում,
- վերանայվում են գնահատման արդյունքները:

### *4. Պատասխանատուներ և դերեր*

- *Դպրոց*
- *Ուսուցիչ*
- *Սովորող*
- *Ծնող*

### *4.1. Դպրոցի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում*

Դպրոցի դերը կայանում է հետևյալ գործողություններում՝

- Մշակել և հաստատել ակադեմիական ազնվության (ԱԱ) քաղաքականության դրույթները:
- Ապահովել փաստաթղթի հասանելիությունը Ճեմարանի համայնքին և պարբերաբար անցկացնել սեմինարներ ծնողների, սաների, աշխատակիցների համար:
- Կարևորել գրադարանավարի դերը ԱԱ ձևավորման գործում:

### *4.2. Ուսուցչի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում*

Ուսուցչի դերը կայանում է հետևյալ գործողություններում՝

- Մասնակցել ԱԱ փաստաթղթի մշակման և վերանայման գործընթացին:
- Սովորողներին ծանոթացնել ԱԱ քաղաքականությանը:
- Սովորողների մոտ ձևավորել տեղեկատվական գրագիտության հմտություններ:
- Ուսուցիչները սեփական փորձով պետք է ցույց տան ԱԱ կարևորությունը (տալ հղումներ օգտագործված նկարներին, տեքստերին, սահիկաշարում ներառված նյութերին, մեջբերումներ կատարելիս և այլն) :
- Սովորեցնել սաներին արտահայտել սեփական մտքերը, ինքնուրույն ստեղծել աշխատանքներ, չընդօրինակել:
- Կարևորել ոչ միայն վերջնարդյունքը, այլ շեշտադրել ողջ ուսումնական գործընթացը՝ ապահովելով հետևողականություն:

### *4.3. Ծնողի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում*

Ծնողի դերը կայանում է հետևյալ գործողություններում՝

- Տեղյակ լինել ԱԱ փաստաթղթին:
- Լինել օրինակ իրենց երեխաների համար և հետևողականությամբ սատարել դպրոցի գաղափարախոսությանը:
- Խրախուսել երեխայի ԱԱ դրսևորումները:

### *4.4. ԿԴ սովորողի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում՝ ըստ տարիքային առանձնահատկության*

| | |
|---|---|
| Մանկակրթարան | Ակադեմիական ազնվության մասին ոչ թե խոսվում է կանոններով, այլ այդ ամենը ցուցադրվում է պարզագույն օրինակների միջոցով:<br>3-5 տարեկանը պետք է.<br>• ընդունի, որ ծնողն իրեն օգնել է որևէ աշխատանք կատարելիս<br>• սովորած գիտելիքները ներկայացնի իր բառերով, ոչ թե ընկերների բառերից օգտվելով<br>• հասկանա, որ խոսքի, նկարի, գործողության կրկնօրինակումը խաբեություն է |
| 1-ին դասարան | • չստի<br>• ձգտի բարձր որակի գործունեության<br>• գնահատի սեփական աշխատանքը<br>• բացառի արտագրությունները<br>• մասնակցի խմբային աշխատանքներին՝ գնահատելով ու կարևորելով բոլորի խոսքն ու դերը<br>• սովորի խոսքում անընդհատ «ես»-ի մասին չխոսել<br>• օգտագործի պարաֆրազներ |
| 2-րդ դասարան | • Ցույց տա և մեծահասակի օգնությամբ գրառի կարդացած գրքի տվյալները՝ գրադարանի համար, հեղինակ, էջ<br>• օգտվի իրեն ծանոթ մի քանի կայքերից, կարողանա նշել օգտված կայքի հղումը մեծահասակի օգնությամբ<br>• բացառի ցանկացած տեսակի արտագրություն<br>• խմբային աշխատանքների ժամանակ ունենա իր կարծիքը և չօգտվի ընկերների տեսակետնեռից՝ ներկայացնելով որպես իրենը<br>• խոսքի մեջ անգամ մեջբերելիս նշի աղբյուրը՝ ուրիշի ուղղակի խոսք<br>• կիրառի դպրոցի ակադեմիական ազնվության գործիքները՝ ձևաթղթեր<br>• պատասխանատվություն կրի իր սեփական գործունեության համար |
| 3-4-րդ դասարաններ | • Ցանկացած աշխատանքի ժամանակ նշի օգտագործված աղբյուրը՝ ըստ MLA ստանդարտի<br>• խուսափի կրկնօրինակումներից<br>• բացառի արտագրությունները<br>• նկատելով ընկերների խախտումները՝ հիշեցնի նրանց դրա մասին<br>• համագործակցությունների ժամանակ նշի «մենք»-ի գաղափարը<br>• ծանոթ լինի դպրոցի ակադեմիական ազնվության քաղաքականության փաստաթղթին<br>• չօգտվի մյուսների տեսակետներից՝ քողարկելով դա որպես իրենը<br>• գիտակցի, որ գրագողությունը խաբեություն է<br>• այլ ստեղծագործություններից հատվածներ մեջ բերելիս օգտագործի ուրիշի ուղղակի խոսք<br>• վերջնական գնահատվող աշխատանքներում՝ ռեֆերատ, զեկույց, PYP Ստուգատես, կարևորի սեփական խոսքն ու տեսակետը: |

## *5. Կազմակերպական աշխատանք*

**5.1.** «Ակադեմիական ազնվության քաղաքականություն» փաստաթուղթը տեղադրվում է Ճեմարանի կայքէջում և հասանելի է ողջ համայնքին:

**5.2.** «Ակադեմիական ազնվության քաղաքականություն» փաստաթուղթը վերանայվում է երկու տարին մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության, դպրոցի ուսումնական համայնքի կողմից:

**Աղբյուրներ.**


- Политика академической честности, Международная школа г. Нур-Султан, 2019.
- Academic integrity, IBO, 2019.
- Academic honesty in the IB educational context, IBO, 2016.